ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

26.07.2012թ.
176-ի 2

Երևանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Շնորհակալ ենք ԻԱԿ-ի՝ 26.06.2012թ.-ի՝ Կոջոյանի անվան հ. 15 կրթահամալիրի վերաբերյալ թիվ 175-ի 7 հարցմանը տրված պատասխանի համար: Սակայն, քաղաքապետարանի պատասխան գրությամբ չեն տրամադրվել ԻԱԿ-ի հարցման մի շարք հարցերի պատասխանները, մասնավորապես.

1. Հակոբ Կոջոյանի անվան հ. 15 կրթահամալիրում ե՞րբ են իրականացվելու ջեռուցման ընդհանուր համակարգի (կաթսայատուն) կառուցման աշխատանքները եւ ե՞րբ է ջեռուցման ընդհանուր համակարգը (կաթսայատունը) հանձնվելու շահագործման:
2. Կոնկրետ ե՞րբ են նախատեսվում կատարել Հակոբ Կոջոյանի անվան հ. 15 կրթահամալիրի վերանորոգման աշխատանքները:
3. Նախատեսվու՞մ է արդյոք կրթահամալիրի հին դպրոցական կահույքը (դպրոցական նստարաններ, պահարաններ, գրատախտակներ և այլն) փոխարինել նորով:
4. Եթե այո, ապա ե՞րբ:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ տեղեկությունները, ինչպես նաեւ հայտնել.

1. Նախատեսվու՞մ է արդյոք իրականացնել Հակոբ Կոջոյանի անվան հ. 15 կրթահամալիրի դասասենյակների եւ սանհանգույցների վերանորոգում, այդ թվում՝ կոսմետիկ (պատերի ծեփապատում, սանհանգույցների սալիկապատում եւ այլն) 2012-2013 ուս. տարում,
2. Արդյոք 2012-2013 ուս. տարում կգործի՞ կաթսայատունը եւ կրթահամալիրն ընդհանուր կջեռուցվի,
3. Խնդրում ենք տրամադրել կրթահամալիրի կաթսայատան կառուցման նախագծանախահաշվային փաթեթը,
4. Խնդրում ենք տրամադրել Երեւանի քաղաքապետարանի սոցիալ-զարգացման 2012-2015թ.թ.-ի ծրագրի այն հատվածը, որով նախատեսված են Հակոբ Կոջոյանի անվան հ. 15 կրթահամալիրի հիմնանորոգման աշխատանքները:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան